

ԽԱՂԱՂ ՆԱԲԱՀԱՆԳԻՍ

Անցեալները փորձեցի առօրեայ աշխատանքս պահ մը դադար առնել ու բացի առցանց տեղեկատուական կայք մը, որ հայկական ու համաշխարհային նորութիւնները կը հաղորդէ 2-3 տողով: Հոնկէ ցատկեցի լիբանանեան կայք մը, որ կու տայ լուրերուն վերնագիրները: Քանի մը վայրկեանի թերթատումներս պարզեցին սարսափելի վիճակ մը. Լիբանան՝ ընտրութիւններ, ընկերատնտեսական անկում, ոճիրներ, capital control... Հայաստան՝ ազերիական յառաջխաղացումներ, բանակցութիւններ, ընդդիմութիւն... Ուքրանիա-Ռուսիա՝ պատերազմ, պատժամիջոցներ, սպառազինում, գաղթականներ...

5 վայրկեանը բաւարար էր, որ զոջամ գործէ շեղումիս համար: Բարեբախտաբար ժամը 12:05 եղաւ եւ երկրորդ զբօսանքի զանգը «զարնուեցաւ» ու աստիճաններէն սկսելով բակը լեցուեցաւ աշակերտներուն խնդուքով, պոռչտուքով ու մանաւանդ ճիշով (7-8 տարեկանները չէք պատկերացներ որքան եւ ինչ բարձր կը ճշան): Հեռացայ քաղաքականութեան յորձանուտէն ու վերադարձայ աղմկոտ, բայց հանդարտ միջավայրս:

Ինչ անբաղդատելի ժխոր՝ քաղաքական մարդոցն ու աշակերտներունը: Մէկը՝ զգուելի, միւրը՝ կենսալի: Օրինութիւն է դպրոցը մանուկին ու պատանիին համար, որոնք աշխարհէն հեռու՝ իրենց մանկութիւնն ու պատանութիւնը կ'ապրին իրենց աշխարհին մէջ, ուր կ'իշխէ բարութիւնը, հասկացողութիւնը, այլասիրութիւնը, ուր եթէ հոգ կայ, ապա գրաւորի է, տարակարծութիւնները պասքէթի խաղին մասին, վեճերը՝ անխուսափելիօրէն կարճատեւ եւ հաշտութեամբ վերջացող:

Վահան Թէքէեան հայ եկեղեցին կը բնորոշէ իբրեւ «խաղաղ նաւահանգիստ»: Այդպիսի միջավայր մըն ալ չէ հայ դպրոցը, որ անկարելին կարելի կ'ընէ, որ հայ մանուկն ու պատանին ապրին խաղաղ ու ապահով, որ աշխարհի ժխորը չթափանցէ իր պարիսպներէն ու անոնց հոգիներէն ներս...

Եթէ յոգնած էք քաղաքականութենէն, նամանաւանդ երեսփոխանութեան թեկնածուներուն խոստումներէն, հրամմեցէք ՀԱԳ՝ զբօսանքի, ամէն օր ժամը 10:15-ին եւ 12:05-ին, եւ կը խոստանամ որ հոգեկան հանգստութիւն պիտի զգաք. գաւաթ մը սուրճ ալ կրնանք խմել, պայմանաւ որ քաղաքականութիւն չխօսիք, այլապէս...

Սիրով՝



ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻ ՀԱԳ-Ի ՄԵՑ ԸՆՏԱՆԻԷՆ ԿՈՐԱԵ ՄԵՐ ՄՐՏԱԳԻՆ ԲԱՐԵՄԱՐԹԱՆԵՐԸ ԿԸ ՅՐԵՆԸ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ, ԱՐՕԹԵԼՈՎ ՈՐ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՅՈՅՍԸ ԻՐԱԿԱՆ ԴԱՐՁՆԵՆԸ ԵՒ ԱՊՐԻՆԸ ՄԵՐ ԿԵԱՆԵՐՆ ՄԵՋ:



15 Փետրուարին ՀԱԳ այցելեց Ֆրանսայէն աւետարանական պատուիրակութիւն մը, մասնակցութեամբ Ֆրանսահայ աւետ. եկեղեցիներու միութենէն վեր. Ժիլպետ Լեոնեանի եւ վեր. Սէմ Ալպարեանի, ինչպէս նաեւ արաբ աւետարանիչ եւ հովիւ Սաիտ Ուժիպուի եւ ֆրանսացի գործարար Միքայէլ Ալէնի: Զիրենք ընդունեցին պատ. Ժիրայր Ղազարեան եւ դոկտ. Արմէն Իւրնէշեան, որոնք ներկայացուցին դպրոցին պատմութիւնը, ինչպէս նաեւ առաքելութիւնը՝ արդի պայմաններուն մէջ: Հիւրերը արտայայտեցին իրենց խորունկ տպաւորութիւնը մեր կատարածէն եւ մաղթեցին յաջողութիւն՝ մեր ջանքերուն:



16 Մարտին դպրոց այցելեցին վերապատուելիներ Զորճ (Գանատա) եւ Ճեմմա (Ֆրանսա) Տապօները, ընկերակցութեամբ գանատացի միսիոնարի մը: Եկեղեցւոյ հովիւն ու տնօրէնը ընդունեցին զիրենք եւ պատմեցին դպրոցին մասին: Հիւրերը շրջեցան նաեւ շէնքն ու շրջապատը, ապա մեկնեցան՝ արտայայտելով իրենց մեծ տպաւորութիւնը կատարուած ու կատարուող աշխատանքէն:

Երեքշաբթի, 8 Մարտին ՀԱԳ նորընտիր Ծնողաց մարմինը հիւրասիրութեամբ մը պատուեց ուսուցիչները: Ելոյթ ունեցան ատենապետուհի տիկին Վերա Հատտատ, ատենադպրուհի տիկին Հուրի Ղազարեան եւ վարչական պարոն Մինաս Սարգիսեան: Աղօթք մատուցեց պատուելի Ղազարեան, իսկ շնորհակալական խօսքով ելոյթ ունեցաւ տնօրէնը: Ուսուցիչներուն բաժնուցան դպրոցին կողմէ տրամադրուած նուէրները՝ առ ի գնահատանք անոնց աշխատանքին ու նուիրումին:



ՀԱԳ ՆՈՐԸՆՏԻՐ ԾՆՈՂԱՅ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԿԱԶՄԸ

Ատենապետուհի՝ տիկ. Վերա Հատտատ
Փոխատենապետուհի՝ տիկ. Ալին Պօղոսեան
Ատենադպրուհի՝ տիկ. Հուրի Ղազարեան
Գանձապահ՝ պրն. Եղիկ Թորոսեան
Հաշուապահուհի՝ տիկ. Սիլվա Տաքսեան
Խորհրդականներ՝ տիկնայք Սաթենիկ Աբրահամեան, Յասմիկ Աւետեան, Յասմիկ Գոճայեան, Սիլվա Մինասեան, Թալին Միքայելեան, Կարինէ Չոլաքեան, Վանեսա Ֆրանսիս. պարոնայք Վաչէ Կոբարեան, Մարտիկ Շեքերճեան, Մինաս Սարգիսեան:

▶ ԵՐԿՐԵԱՅ ԴԱՍՏԻԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարտի երրորդ շաբաթը սկսաւ «առանց դասի» գոյգ օրերով, բայց յարկանշուեցաւ դաստիարակչական կարեւոր գործունէութիւններով:

...

14 Մարտ 2022-ին նախակրթարանի աշակերտները ունեցան իրենց գործունէութիւնը տարբեր պահերու: Աշակերտները լսեցին «Ո՞վ եմ ես եւ ինչ յատկութիւններ ունիմ, որոնցմով շրջանակիս կրնամ օգտակար ըլլալ» ներկայացումը: Անոնք ինքզինքնին ներկայացուցին եւ յայտնեցին իրենց փափաքները, որմէ ետք խմբային աշխատանքներ ունեցան: Նկատի առնելով, որ մեր շրջանակին մէջ նաեւ կան մարդիկ, որոնց սիրայօժար ծառայութիւնը կ'օգնէ դպրոցիս հեզասահ ընթացքին, աշակերտները շնորհակալական բացիկներ պատրաստեցին եւ նուիրեցին անձնակազմին: Աշակերտները նաեւ իրենց դասարանները զարդարեցին եւ poster-ներ շինեցին «բարեկամութեան» մասին: Ուրախ մթնոլորտի մէջ անոնք նաեւ միասին picnic ըրին, խաղան եւ պատմութիւններ լսեցին:

Յաջորդ օրը՝ 15 Մարտ 2022-ին, երկրորդականի աշակերտները ունեցան իրենց «Գործունէութեան Օր»-ը: Միասնաբար նախաճաշելէ ետք, անոնք հաւաքուեցան եւ զրուցեցին ինքնավստահութեան, ինքնասիրութեան եւ ինքնագնահատու-



թեան մասին. այս պահը առաջնորդեց տիկին Հռութ Եունիսէսը: Պատուելի Ժիրայր Ղազարեան շատ լաւ ձեւով ներկայացուց «Աշակերտ-ուսուցիչ յարաբերութիւն» նիւթը, արծարծուեցան երկուստէք առաջ բերուած իրավիճակներ եւ միասնաբար փորձ եղաւ լուծումներ գտնելու: Տօնական մթնոլորտ տիրեց, երբ աշակերտները իրենց ընկերներուն տարեդարձը նշեցին, դասարանները զարդարեցին եւ իրենց կարգին պատրաստեցին շնորհակալական բացիկներ, որոնք նուիրեցին տնօրէններուն, հովիւին, դպրոցի ու եկեղեցւոյ գրասենեակի պաշտօնեաներուն եւ հոգաբարձութեան՝ առ ի գնահատանք դպրոցին եւ աշակերտութեան համար անոնց ջանքերուն:

Երկու օրերու գործունէութիւնները պատրաստած էր ու վարեց տիկին Հռութ Եունիսէս, գործակցութեամբ աշակերտներու եւ ուսուցիչներու:





► ՀԱԳ-ի 11-րդ դասարանի աշակերտ Հրակ Մամիկոնեան ԱՌԱՋԻՆ հանդիսացած է Ազգ. առաջնորդարանի կազմակերպած ասմունքի մրցումին:

Կը շնորհատրենք
մեր շնորհալի աշակերտը:

► Աշակերտներու հրապարակային արտայայտուելու կարողութիւնը զարգացնելու նպատակով, հայերէնի դասաւանդման ծրագրին մէջ ընդգրկուած է «ԲԱՆԱԻՈՐ ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ» դասապահը, առաջնորդութեամբ փիկին Անի Պիլալեանի:

Այս ծիրին մէջ, 25 Փետրուար 2022-ի արենամարզանքի ընթացքին 7-րդէն - 10-րդ դասարաններու աշակերտներ՝ Լիանա Շահինեան, Վարդան Աւեսեան, Ալիք Կարապետեան, Վահէ Միքայէլեան, Սէրլի-Ռոզի Շահինեան, Արին Պաստաճեան եւ Սէրլի Հարութար խանդավառութեամբ ներկայացուցին հետաքրքրական նիւթեր: Այս աշխատանքը իրենց համար օգտաշար փորձառութիւն մը հանդիսացաւ:

Որբաթ, 18 Մարտին, դպրոցի 6-րդէն 12-րդ դասարաններու աշակերտները, ուսուցիչներ, ծնողներ եւ հիւրեր արժանաւորապէս ոգեկոչեցին դպրոցի հիմնադրութեան տօնը:

Յայտագիրը, որ սկիզբ առաւ քայլերգերու ունկնդրութեամբ եւ հիմնադիրներու ու հանգուցեալ տնօրէններու, հովիւներու, հոգաբարձուներու, ուսուցիչներու եւ շրջանաւարտներու յիշատակին յարգանքի յոտնկայս լռութեամբ, վարեց տիկին Հռութ Եունիսէ: Նախ ելոյթ ունեցաւ դպրոցի պատուակալ տնօրէն դոկտ. Զաւէն Մարլեան, որ շահեկան մանրամասնութիւններով անդրադարձաւ դպրոցի առանձնայատկութիւններէն երկուքին՝ յետեղեռնեան հայ սփիւռքի առաջին երկրորդական դպրոցը ըլլալու հանգամանքին եւ մայրաքաղաք Պէյրութի մէջ գտնուելու անոր կարեւորութեան: Ապա Աշակերտական խորհուրդը ներկայացուց ՀԱԳ-ի մասին հետաքրքրական փաստեր: Դպրոցի նախկին եւ ներկայ հովանաւորներուն եւ բարերարներուն մասին խօսեցաւ տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշլեան, որ սահիկներով ներկայացուց այն կազմակերպութիւններն ու անհատները, որոնք անցեալին եւ ներկայիս կ'օժանդակեն դպրոցին:

Երախտագիտութեան մասին խօսեցան Հ.Ա. Ա. եկեղեցւոյ հովիւ պատուելի Ժիրայր Ղազարեան՝ դիտուած քրիստոնէական պրիսմակէ, իսկ 2013-ի շրջանաւարտ օրդ. Էնժի Քիրեճեան՝ շրջանաւարտի դիտանկիւնէն:

Ապա ամբիոն տրամադրուեցաւ աշակերտներու, որոնք երկու խումբով քննարկեցին հետեւեալ նիւթերը. «ինչպէս կրնանք մասնակցիլ դպրոցի բարելաւումին» (վարիչ՝ օրդ. Քիրեճեան) եւ «փորձառութիւնս ՀԱԳ-ի մէջ, իբրեւ ոչ-հայ աշակերտ» (վարիչ օրդ. Սէլին Համմուտ (2021-ի շրջ): Ապա 12-րդի աշակերտուհի Նարէ Գարամանուկեան ներկայացուց տեսերիզ մը, ուր աշակերտներ իրենց շնորհակալութիւնը կը յայտնէին դպրոցին:

Հանդիսութեան փակումը կատարեցին Աշակերտական խորհուրդի վարչապետ Էլվիրա Զէյթունցեան (12-րդ) եւ դպրոցի հոգաբարձութեան ատենապետ պարոն Ներսէս Պաղտոյեան, որ յայտնեց իր խոր տպաւորութիւնը այս ձեռնարկէն եւ վերանորոգեց դպրոցի յարատեւումի կամքը՝ նորանոր ծրագիրներով, միշտ հաւատարիմ հիմնադիրներու տեսիլքին:

Հովիւին աղօթքով փակուեցաւ 1:30 ժամ տեւած հանդիսութիւնը, որուն աշակերտները հետեւեցան օրինակելի կարգապահութեամբ եւ հետաքրքրութեամբ:



ՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ Ա. Յարութեան տօնին առթիւ ՀԱԳ-ի անձնակազմին եւ աշակերտներուն նուիրեց գատկական տուրմի եւ փուկեղներու փաթեթներ:

Շնորհակալութիւն իրենց այս ազնիւ արարքին համար:

ԼՍԳ-ի երկարամեայ նախկին աշակերտ, գործարար-բարերար Ռաֆֆի Մանուկեան 10 Յունուար 2022-ին Լոնտոնի մեջ Royal Academy of Music-ի կողմէ պատուում 17 բարերարներու շարքին եղած է: Ռաֆֆի Մանուկեան վերջերս 640 միլիոն լ.ո. նուիրեց Պուրճ Համնուտի Մեսրոպեան արուեստից վարժարանին՝ հոգալով աշակերտութեան կրթավճարին երկու երրորդը:



ԼՍԳ-ի նախկին աշակերտ, բարերար պր. Լեոն Աֆէեան 27 Յունուար 2022-ին նշանակուած է Քեպէքի մեջ (Գանատա) Հայաստանի Հանրապետութեան պատուոյ հիւպատոս:

ԼՍԳ-ի երկարամեայ աշակերտ, Մօտեռնա ընկերութեան նախագահ եւ բարերար դոկտ. Նուպար Աֆէեան 5 Դեկտեմբեր 2021-ին CNN-ի Ֆերիտ Ջաքարիայի հեռուստացոյցի յայտագրին մեջ ընդգրկուած էր:



Բանաստեղծուի Վեհանոյշ Թէքեանի (1966-ի շրջ.) «Կին՝ ատեան եւ մատեան» քերթողական եւ արձակ կտորներու ժողովածուն լոյս տեսած է Երեւանի մեջ 2022-ին, Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան կողմէ:

Տէր եւ տիկին Վաչէ եւ Թամար (ծն. Գարայեան, 1978-ի շրջ.) Մանուկեան 2021-ի տարեվերջին մէկ միլիոն տոլարի նուիրատուութիւն ըրած են ի նպաստ ՀԲԸՄ-ի ծրագիրներուն:



Երկարամեայ նախկին աշակերտ պրն. Վիգէն Հալաճեան Լոնտոնի հայոց Ս. Եղիշէ եկեղեցիի Ծխական խորհուրդի ատենապետ վերընտրուած է վերջերս:


Մանսթրօ Կարօ Աւետեան (1998-ի շրջ.) պետական հրաւերով 22 Փետրուարին Դամասկոսի Ազգային օփերայի պետական հանդիսարանին մեջ ղեկավարած է Սուրիոյ ազգ. պետական նուագախումբը,




յայտագրի վրայ ունենալով Շթրաուսի, Պիգլի, Սվետիտովի եւ Պոլլմանի գործերէն: Իսկ 18 Մարտ 2022-ին, ՀԲԸՄ-ի շրջանային համագումարին առթիւ տրուած համերգին ան ղեկավարեց Լիբանանի պետական ֆիլհարմոնիք նուագախումբը:



Հայկազեան համալսարանին մեջ 10 Դեկտեմբեր 2021-ին կայացած Մերթ Գասպար Տէրտէրեանի յիշատակի հանդիսութեան, հանգուցեալ իրաւբանին անհատականութեան մասին խօսած է բանասէր, հրապարակագիր եւ կրթական մշակ Պարոյր Աղպաշեան (1964-ի շրջ.):



24 Մարտ 2022-ին լոյս տեսաւ ԼՍԳ-ի պատուակալ տնօրէն, պատմաբան դոկտ. Զաւէն Մարրլեանի (1955-ի շրջ.), «Հայոց նորագոյն պատմութեան էջերէն (1915-2020)» նոր գիրքը, որ հեղինակին ցարդ լոյս տեսած 14-րդ գիրքն է, մեկենասութեամբ ԼՍԳ-ի երկարամեայ նախկին աշակերտ, գործարար եւ բարերար Ռաֆֆի Մանուկեանի:



Օրդ. Մեղրիի Խօշեան (2004-ի շրջ.), 1 Փետրուար 2022-ին ստանձնած է Հայաստանի ամերիկեան համալսարանի (AUA) Ընդունելութեան գրասենեակի տնօրէնի (Director of Admissions) պաշտօնը:

Երկարամեայ նախկին աշակերտ Միքայէլ Վայէճեան 9 Յունուար 2022-ին նշանակուած է ՌԱԿ-ի Լիբանանի շրջանային վարչութեան անդամ՝ խորհրդականի հանգամանքով:

ՀԲԸՄ-ի եւ AUB-ի Իսամ Ֆարէս քաղաքականութեան եւ միջազգային հարցերու կազմակերպութեան կողմէ ցեղասպանութեան մասին 7 Դեկտեմբեր 2021-ին կազմակերպուած համաժողովին «Մշակութային իրաւունքներու ոսպնեակին ընդմէջէն» նիւթով հանդէս եկած է դոկտ. Հեղնար Զէյթլեան-Ուաթէնթոն (1986-ի շրջ.):



22 Մարտ 2022-ին ԼՕԽ-ի Ա. Պուլդուրճեան կեդրոնէն ներս ընկերային գործիչ Սիլվա Սոդոմոնեան (1987-ի շրջ.) խօսած է բոնադատումի մասին: Տիկ. Սոդոմոնեան նաեւ Համագգայինի «Արեգ» թատերախումբի բեմադրիչ Գալուստ Ներսիսեանի օգնական նշանակումով է:

Նիւեորքքարնակ տիկ. Սիլվա Էօրտէքեան (ծն. Թիթիւնճեան, 1971-ի շրջ.) 3 Փետրուար 2022-ին Պէյրուսի մէջ Համագգայինի Լիւսի Թիթիւնճեան արուեստի ֆոնտին կազմակերպած աշակերտական նկարչական մրցանքին դատական կազմի անդամ եղած է:

Մեծի տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը 2022-ը «Սփիւքի տարի» հռչակելուն առիթով 17 Մարտ եւ 8 Ապրիլ 2022-ին ունեցաւ առցանց խորհրդակցութիւն-քննարկումներ Սփիւքի զանազան երկիրներու մէջ բնակող եւ հայ սփիւքով շահագրգռուած տասը անձերու հետ, որոնց մէջ էին ֆրանսաբնակ պրն. Յովլէ Շնորհօքեան (1973-ի շրջ.) եւ պէյրութաբնակ պրն. Խաչիկ Տէտէեան (1980-ի շրջ.):

ՊՍԱԿ

- 2007-ի շրջանաւարտ Ծանթ Իզնայրոսեան պսակուած է օրդ. Լին Տաիէրի հետ, 30 Դեկտեմբեր 2021-ին, Ս. Նշան մայր եկեղեցիին մէջ, Պէյրուս:




Հայ Աւետարանական Գոլէճի ՏԻԿՆԱՆՅ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ Կիրակի, 20 Մարտ 2022-ին իր մասնակցութիւնը բերաւ Պուրճ Համուտի քաղաքապետութեան հովանաւորած ՄԵՐ ՇՈՒԿԱՆ-Vernissageին:

† 1949-ի շրջանաւարտ եւ դպրոցի տֆոնոր կարգը 1951-ին ասարած, շինարարական մարզի մէջ գործած Անթիպաս Մարտիրոսեան (1931 – 2022) մահացաւ 8 Փետրուար 2022-ին, Պէյրուսի մէջ:



† 1959-ի շրջանաւարտ Կորթ. Սկրորիչ Պալապանեան (1940 – 2012) 24 Յունուար 2022-ին մահացած է յետ անողորմ հիւանդութեան, Լոս Անճելոսի մէջ:




† 1980-ի շրջանաւարտուի, «Ռա-րիօ Սեան»-ի երբեմնի խօսնակ տիկ. Սարմէ Գասապեան-Մինասեան (1961 – 2021) 30 Դեկտեմբեր 2021-ին մահացած է յետ անողորմ հիւանդութեան, Պէյրուսի մէջ:



† Դպրոցի Տիկնանց օժանդակ մարմնի երկարամեայ նախկին անդամ տիկ. Մանուշակ Թորոսեան (1950 – 2022) մահացած է յետ հիւանդութեան, 29 Մարտ 2022-ին, Պէյրուս:

Լոս Անճելոսաբնակ, 1954-ի շրջանաւարտ Զաւէն Տէմիրճեանէն մեծ յապաղումով տեղեկացանք ստորեւ նշուած մահերը.



† 1954-ի շրջանաւարտ, դրամատիկ նախկին պաշտօնէայ տիկ. Սոնա Մալիքեան-Ասրաբեան (1935 – 2020) մահացած է Լաւալի մէջ (Գանադա), 8 Դեկտեմբեր 2020-ին:



† 1954-ի շրջանաւարտ, երկրաչափ, գործարանաւար եւ ազգային բարերար Մանաս Պէօճէքեան (1932 – 2020) մահացած է 19 Սեպտեմբեր 2020-ին, Լոս Անճելոսի մէջ: Ան նաեւ Հայ Դպրի աշխարանքներուն ծառայած է:



† 1954-ի շրջանաւարտ, դասախօս, Կնոսէն ու Կեդր. Քալիֆորնիոյ պետական դպրոցներու Կնոսէն միութեան գործաւար-Կնոսէն Միւր Շիրքարմեան (1935 – 2018) մահացած է 5 Յուլիս 2018-ին, Ֆրեզնոյի մէջ:

† 1954-ի շրջանաւարտներէն ԱՄՆ-ի մէջ մահացած են նաեւ օրանաւային ճարտարագէտ Յարութիւն Անթոյեան (1935 – 2016) եւ երկրաչափ Հայկ Գասպարեան (1935 – 2014):

ՁԱՏԿԱԿԱՆ ԱԼՈՒՄ



ՆՈՒՐԱՏԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԼՐԱՏՈՒ»-ի նախորդ թիվն է Վեր շնորհակալություն ստացանք հետևեալ նուիրատուներին:

AMAA-ի ՄԻՋՈՑԱՐ

ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ՆՈՒԵՐ	
Շրջ. պրն. Ալպեր Պեգնեան	10.000 տոլար
Շրջ. տղթ. Վաղինակ Դարբինեան	300 տոլար
Շրջ. պրն. Ռաֆֆի Աբոշեան	250 տոլար
Նախկին աշակերտ պրն. Գեորգ Գալայճեան	100 տոլար
Տեր եւ տիկ. Յակոբ եւ Նորա Խաչատուրեան	200 տոլար
ՏԱՐԵԿԱՆ ՁԱՏԱԿՈՒՄ	
Տղթ. Նազարեթ Տարաքճեան	5000 տոլար
ՕԺԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ	
Շրջ. տիկ. Արփի Սարեան	500 տոլար
Շրջ. տղթ. Արա Աբելեան	300 տոլար
Շրջանաւարտներ տեր եւ տիկ. Չարեհ եւ Յասմիկ Մահսերճեան	250 տոլար
Շրջ. պրն. Յարութ Մեսրոպեան	200 տոլար
«ԶԱԲԵՆ ՄԱՐԸԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՒՏ»-ԻՆ	
Շրջ. տիկ. Նուարդ Թահմազեան	300 տոլար
«ԼՐԱՏՈՒ»-ԻՆ ԱՌ Ի ԶԱԶԱԼԵՐԱՆԵ	
Շրջ. պրն. Ճորճ Լոշխանեան	166 տոլար
AMAA-ի ՁԱՏԱԿՈՒՄՆԵՐ	
Նոյեմբեր-Դեկտեմբեր 2021 եւ Յունուար 2022	11.311 տոլար
Փետրուար-Մարտ-Ապրիլ 2022	3317 տոլար

ՄԱՀԱԵՄ-ի ՄԻՋՈՑԱՐ

WCM եւ ACO ֆոնտեր՝ դպրոցի անձնակազմի փոխադրածախսի օժանդակություն	5000 տոլար
---	------------

ՈՐԱՆԱԿԻ ԴՊՐՈՑԻՆ

Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա.-ի կողմէ Ուսուցչաց տօնին առթիւ նուէր ՀԱԳ-ի ուսուցիչներուն	32,000,000 լ.ո.
Շրջ. տիկ. Վիվա Էքմէքճի-Հերմէզ	5000 տոլար
Մի ոմն	100 տոլար
«ԱՐԱ ՊԱԼԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՒՏ»-ԻՆ	
Ամանորի եւ Ս. ծննդեան տօներուն առիթով	
Տիկ. Սօսի Պալեան	100 տոլար
Պր. Արմէն Պալեան	100 տոլար
Տղթ. Արման եւ դուկտ. Արաքս Գրիգորեան	100 տոլար
«ԶԱԲԵՆ ՄԱՐԸԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՒՏ»-ԻՆ	
Տեր եւ Տիկ. Չաւեն Ղարիպեան	100,000 լ.ո.
ՀԱԳ-Ի ԱՆՁՆԱԿԱԶՄԵ	
Սարմէ Գասապեան-Միլասեանի մահուան առիթով	300,000 լ.ո.
Ա. Եկեղեցւոյ նախկին հոգաբարձու Վահրամ Գարակեօզեանի մահուան առիթով	300.000 լ.ո.
Ուսուցչուհի տիկ. Չարմինէ Ասմինեանի զաւկին պսակին առիթով	300.000 լ.ո.
Ժողէֆ Նոիրայի մահուան առիթով	300.000 լ.ո.
Ժանէթ Միսիրեանի մահուան առիթով	300.000 լ.ո.

Խմբագիր՝ ՏԵՐԵՆ ՂՈՒՏ. ԱՐՄԵՆ ԻՐԱՆԵՐԵԱՆ
 Խորհրդատուներ՝ ՏԻՍՆ ՆԵՐՄԵՆ ՊԱՏՈՅԵԱՆ
 ՏԻՍՆ ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐՃԵԱՆ
 Էջաղորում՝ ԱՆԻ ԲԵՏԵՆԵԱՆ ՊԱՄԵԹ
 Մ.Ա.Յ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԶԻՆՏԱՐԱԿԱԶՄԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE
 P.O. Box 3672-Beirut
 Tel: 01 349 816 Fax: 01 751 469
 E-mail: A_E_C@cyberia.net.lb
 Website: aecbeirut.edu.lb
 Facebook: Armenian Evangelical College